



Common borders. Common solutions.

AGREEN

**«ԱՆԴՐՍԱՅՄԱՆԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ ԶԱՆՈՒՆ ՍԵՎԾՈՎՅԱՆ
ԱՎԱԶԱՆՈՒՄ ԿԼԻՄԱՅԻՆ ՈՒՂԴԱԾ ԽԵԼԱՑԻ ԵՎ ԿԱՆԱԶ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» նախագիծ**

Բազմապատկիչների միջոցառում

**«Ձեռներեցությունը Սևծովյան ավազանում հանում
կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության»**

19.12.2022



Common borders. Common solutions.

Նախագծի շրջանակում ստեղծվել են առանձին **հարթակ** և **վեբ կայք**, որոնցից յուրաքանչյուն ունի իր բաժիններն ու գործառույթները:

Նախագծի **հարթակը** բաղկացած է ստորև ներկայացված հիմնական բաժիններից.

- **Interactive Map – Ինտերակտիվ քարտեզ**, որտեղ ներկայացված են լոգիստիկ կենտրոնները:
- **Community – Համայնք**, որտեղ ներկայացված է AGREEN փորձառության համայնքն իր կոնտակտային կետերով:
- **CSA in BSB – Կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսությունը սևծովյան ավազանում**
- **E-Learning – Էլեկտրոնային ուսուցում**, որտեղ ներկայացվելիք նյութերը թարգմանության փուլում են:

<https://agreen-platform.com>



Common borders. Common solutions.

Նախագծի **վեբ կայքը** բաղկացած է ստորև ներկայացված հիմնական բաժիններից.

- **About the project – Նախագծի մասին**, որտեղ ներկայացված են նախագծի նպատակները, թիրախային խմբերը և գործընկերները:
- **News and events – Նորություններ և իրադարձություններ**, որտեղ ներկայացված են նախագծի շրջանակներում իրականացված միջոցառումների հակիրճ ամփոփումները:
- **Blog – Բլոգ**, որտեղ հրապարակվում են նախագծին առնչվող մամլո հաղորդագրությունները և նորություններ այն գյուղատնտեսական կազմակերպություններից ու ծրագրերից, որոնք ունեն կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության բաղադրիչ:

<https://agreen-project.eu>



Project funded by
EUROPEAN UNION



AGREEN

Community for climate-smart agriculture



Common borders. Common solutions.

«Օրգանական Հայաստան» գյուղատնտեսական ասոցիացիա ՀԿ

Վերջին տարիներին օրգանական գյուղատնտեսությունը առավել մեծ թափով է սկսել տարածվում գտնել աշխարհում, որից անմասն չի մնացել նաև Հայաստանը:

Օրգանական սննդի արտադրությունը, մշակումն ու սպառումը, կայուն գյուղատնտեսությունը և էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայրը խթանելու նպատակով ստեղծվել է «Օրգանական Հայաստան» գյուղատնտեսական ասոցիացիա ՀԿ-ն: Ասոցիացիայի տեսլականն է նպաստել մարդկանց առողջությանը և ստեղծել մաքուր շրջակա միջավայր Հայաստանում: «Օրգանական Հայաստան»-ի անդամները արտադրում և նպաստում են տեղական արտադրության սննդամթերքի սպառմանը ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում:

Ասոցիացիան որդեգրել է աշխատանքային սկզբունքներ և արժեքներ, որոնց պատշաճ ապահովումն էլ իրենց հաջողության գրավականն է: Այդ արժեքներից են ներգրավվածությունը, համագործակցությունը, թափանցիկությունը ֆինանսական ու հաղորդակցության գործընթացներում և արդյունավետությունը:

«Օրգանական Հայաստանը» ստեղծվել է Ավստրիական զարգացման գործակալության OASİ ծրագրի աջակցությամբ:

Այսպիսով՝ ասոցիացիայի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի օրգանական սեկտորի բարելավումն ու զարգացումն է:



Հատված Վրաստանի դաշտային այցի մամլո հաղորդագրությունից

Դաշտային այց, Վրաստան, Թբիլիսիի շրջան – 07.08-10.08.2022

2022 թվականի օգոստոսի 7-10-ը ժամանակահատվածում Վրաստանում տեղի ունեցավ փորձի փոխանակման երկրորդ դաշտային այցը, որի շրջանակում «Էկանա» կենսաբանական ֆերմերային ասոցիացիան հյուրընկալել էր նախագծի գործընկերների ներկայացուցիչներին:

Հիշեցնենք, որ հուլիսի 11-13-ը Վրաստանը հյուրընկալել էր նախագծի գործընկեր երկրներին փորձի փոխանակման առաջին այցի համար, որը կազմակերպված էր «Էկանա» կենսաբանական ֆերմերային ասոցիացիայի կողմից: Այցի ընթացքում մասնակիցներն այցելել էին «Seed Ark Farm», որտեղ կատարվում են տարբեր մշակաբույսերի գիտական փորձարկումներ՝ ազնվամորի, ռեհան, լոլիկ և այլն: Ծրագրի շրջանակում ցորենի տարատեսակներն էին փորձարկում մանրամասն քաջատրեյդ և ցույց տալով մշակման տեխնոլոգիաներն ու առանձնահատկությունները:

Հաշվի առնելով առաջին այցի ժամանակ ստացված տեղեկատվությունը և փորձարարական աշխատանքները, երկրորդ այցի ընթացքում հիմնականում տեղի է ունեցել նախորդ այցի ժամանակ բնարկված մոդելների արդյունքների ներկայացում: Ինչպես արդեն գիտենք, ծրագրի շրջանակում փորձարկվում են ցորենի տարատեսակներն: Իրականացվել է փորձարկված մշակաբույսի բերքահավաք և հատիկների տարանջատում, մանրամասն ցուցադրվել են ստացված արդյունքները, ինչպես նաև ցուցադրվել է ցորենի տվյալ տեսակի աճը կլիմային ուղղված խելացի տեխնոլոգիայով մշակման եղանակով:

Ազրոնոմները փաստեցին, որ ստացվել է բարձր որակի բերք և բերքատվության տոկոսը նույնպես ակնկալիքների սահմանում է եղել:

Մյուս երկրների նման Վրաստանում ընտրված մշակաբույսերը փորձարկվել են ինչպես կլիմայի նկատմամբ խելամիտ, այնպես էլ ավանդական եղանակներով՝ համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով: Մշակաբույսերի ցանքը, ըստ ամեն երկրի, հետևյալն է.

- Բուլղարիա
 - Տրիտիկալե
 - Բամիա
- Վրաստան
 - Օրգանական ցորեն
 - Երեքնուկ
 - Ձավարեղեն, հատիկաճրճեղեն, բանջարաբուստանային կուլտուրաներ (սինտրոպիկ գյուղատնտեսության մոդել)
- Թուրքիա
 - Արևածաղիկ
 - Ընկույզ



Common borders. Common solutions.

Լոգիստիկ կենտրոնների **նպատակը** կապի ստեղծումն է սևծովյան ավազանի երկրներում գործող լոգիստիկ կենտրոնների և արտադրողների միջև՝ առևտրի, ինֆորմացիայի փոխանակման և կայուն զարգացման համար:

Հայաստանն ունի ներկայացրած 12 լոգիստիկ կենտրոններ, որոնցից 9-ը գտնվում են Երևանում, 1-ը՝ Արմավանում, 1-ը՝ Արտաշատ քաղաքում, 1-ը՝ Ակունք գյուղում:

1. «Արարատ» սննդի կոմբինատ
2. «Մեր սարեր»
3. «Սպայկա»
4. «Ուրբան լոջիստիք սերվիսիս» (ULS) լոգիստիկ համալիր
5. «Էկոֆրուտ»
6. «Բեսթ Ֆրուիտ» լոգիստիկ կենտրոն
7. «Ռիվալ»
8. «Այս Հաուս» լոգիստիկ համալիր
9. «Բրենդ լիդեր»
10. «Ադորիք»
11. «Արտֆուդ»
12. «Էկոկար»





Common borders. Common solutions.

Հիմնական ներկայացվող տեղեկատվությունը.

- **Հիմնադիր/սեփականատեր**
- **Կոնտակտային անձ**
- **Հիմնական տեղեկատվություն**
- **Հասցե, կոնտակտային տվյալներ**
- **Կարճ նկարագրություն կառույցի նպատակների մասին**
- **Մատուցվող ծառայություններ**
- **Հասանելիության մասին տեղեկատվություն**



Project funded by
EUROPEAN UNION



AGREEN

Community for climate-smart agriculture



Common borders. Common solutions.

«Էկոֆրուտ» ՍՊԸ

«Էկոֆրուտ» ՍՊԸ

Կարեն Գասպարյան, Տնօրեն

Կարեն Գասպարյան, Տնօրեն

Ֆինանսավորում


Մասնավոր

Նկարագրություն

Էկոֆրուտ ՍՊԸ-ն Հայաստանի առաջատար ընկերություններից մեկն է, որը մասնագիտանում է թարմ, սառեցված, չոր և պահպանված մրգերի և բանջարեղենի երկարաժամկետ պահպանում, վերամշակում, ներմուծում և արտահանում: Սառնարանային սարքավորումներ - 2500 խորանարդ մետր, հագեցած ամենաժամանակակից սարքավորումներով:

Վայր / հասցե

Հայաստան, Երևան, Լուկաշինի փող., 134/1 շենք



Direction

134/1, Lukashina street, Yerevan, Armenia

+374 41 70 07 08

<http://ecofruitarmenia.am/>

info@ecofruitarmenia.am

<https://www.facebook.com/EcoFruitLLC>

«Էկոֆրուտ» ՍՊԸ լոգիստիկ կենտրոն

Կենտրոնի հակիրճ ներկայացում

Էկոֆրուտ ՍՊԸ-ն Հայաստանի առաջատար ընկերություններից մեկն է, որը մասնագիտանում է թարմ, սառեցված, չոր և պահպանված մրգերի և բանջարեղենի երկարաժամկետ պահպանում, վերամշակում, ներմուծում և արտահանում: Սառնարանային սարքավորումներ - 2500 խորանարդ մետր, հագեցած ամենաժամանակակից սարքավորումներով:

Հիմնական հաճախորդներ՝ մեծածախ առևտուր, դիստրիբյուտորային ընկերություններ, արտահանողներ, արտադրողներ, ներկրողներ

Լոգիստիկ հասանելիություն՝ հասարակական տրանսպորտով, մեքենայով, ուղիով, ունի ավտոկայանատեղի

Կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններ

Էկոֆրուտ ՍՊԸ-ն մասնագիտացված է թարմ, սառեցված, չոր և պահպանված մրգերի և բանջարեղենի երկարաժամկետ պահպանման, վերամշակման, ներմուծման և արտահանման մեջ

Պարբերականություն

Աշխատում է շուրջ տարի, բացի կիրակի օրվանից, տոն և ոչ աշխատանքային օրերից

• Վաճառողներին

- ընկերության տարածքում մեխանիկական մանրածախ վաճառքի շուկա չկա, ուստի սևծովյան ավազանի երկրների արտահանողները պետք է կապվեն ընկերության հետ և ուղարկեն իրենց առաջարկը

Երկուշաբթի. 09:00 - 18:00

Երեքշաբթի. 09:00 - 18:00

Չորեքշաբթի. 09:00 - 18:00

Հինգշաբթի. 09:00 - 18:00

Ուրբաթ. 09:00 - 18:00

Շաբաթ. 09:00 - 14:00

Կիրակի: ՓԱԿ Է



Common borders. Common solutions.

<https://agreen-platform.com>

<https://agreen-project.eu>

Սեդա Ջանազյան
AGREEN առցանց հարթակի զարգացման փորձագետ
sedajanazyan99@gmail.com